

ՀԱՅ ՁԵՌԱԳՐԱՀԱՎԱՔԱԿԱՆ ՇՆՈՐՀԱԿԱԼ ԱՇԽԱՏԱՆՔ

1885 թվականին «Սովետական գրող» հրատարակչությունը լույս ընծայեց Երևանի Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի փոխտնօրեն Բաբկեն Չուգասպյանի «Ձեռագրերի աշխարհում» գրքույկը: Մինչ այդ, 1982 թվականին, հեղինակը հրատարակել էր «Ձեռագրերի հետքերով» գրքույկը, որտեղ պատմում էր Ամերիկայի Միացյալ Նահանգներում ձեռագրերի հավաքման իր շնորհակալ աշխատանքների մասին:

Ներկա գրքույկում Բաբկեն Չուգասպյանը շարունակում է իր գիտահանրամատչելի ակնարկ-վրույցները Սովետական Միության տարբեր քաղաքներից ու շրջաններից, ինչպես նաև Անգլիայից, Ֆրանսիայից և Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետությունից Հայաստանի մայր ձեռագրատան՝ Մատենադարանին և մյուս թանգարաններին նվիրաբերված ձեռագրերի, փաստաթղթերի, հայ հոգևոր և նյութական մշակույթի այլ արժեքների և դրանց նվիրատուների ճակատագրերի մասին:

Մեր ժողովրդի ստեղծած հոգևոր և նյութական մշակույթի արժեքները ապրել են նույն ճակատագիրը, ինչ ինքը՝ հայ ժողովուրդը: Դաժան ճակատագրի բերումով ինչպես մեր ժողովուրդը, այնպես էլ նրա ստեղծած նյութական-մտավոր արժեքները սփռվել են աշխարհով մեկ: Այժմ պետականություն ունեցող մեր ժողովրդի առաջնահերթ մտահոգություններից մեկն է՝ հավաքել աշխարհով մեկ սփռված այդ արժեքները և այդպիսով իսկ փրկել դրանք կորստից ու ոչնչացումից: Քիչ չեն նաև այն նյութական արժեքները, որոնք գտնվում են անհայտ անձանց մոտ՝ մեր հայրենիքում թե նրա սահմաններից դուրս;

Գրքույկում հեղինակը վիպական հուզիչ նկարագրությամբ պատմում է վանական պաշտոնական և անպաշտոն՝ անձնական մտերմիկ հանդիպումների մասին հայ և օտար հոգևորական, մտավորական և այլ անձանց հետ: Այդ հիշողությունները կապված են նրա մանկական և հասուն շրջանի կյանքին: Սակայն այս բոլորով հանդերձ, գրքույկի շարադրանքի հիմնական առանցքը հայ ժողովուրդն է և նրա ստեղծած մտավոր արժեքները:

Ի շարս այլ ակնարկ-վրույցների, սույն գրքույկում խոսվում է, օրինակ, այն մասին, որ փարիզաբնակ Ռաֆայել Մարկոսյանի կտակի համաձայն 1922 թվականին, իր մահից հետո, 36 միավորից բաղկացած իր հին գրչագրերի վավաքածոն պետք է ճանապարհորդեր և հանգրվաներ Մայր Հայրենիքում՝ Սովետական Հայաստանում: Սակայն վանական պատճառներով կտակի իրագործումը իրականացավ միայն 45 տարի անց, 1967 թվականին: Այդ հավաքածոյի մեջ ընդգրկված էին Ավետարան, Մաշտոց, Տոնացույց, Մանրուսմունք և այլ բովանդակության մատյաններ՝ Անանիա Շիրակացու ինքնակենսագրությունն ու թվաբանական խնդիրների գրքեր, Գրիգոր Նարեկացու և Ներսես Շնորհալու բանաստեղծություններ, Մխիթար Հերացու աշխատություններից կատարված քաղվածքներ, Մխիթար Երզնկացու թվաբանական խնդիրներ, վանական այլ անհայտ և հայտնի գրիչների և ծաղկողների, վարպետ արծաթագործների և այլ անձանց ստեղծագործական մտքի արտահայտություններ: Սույն ձեռագրերն ընդօրինակված են հայ մշակույթի երբեմնի կենտրոններ Երզնկայում, Խարբերդում, Զեյթունում, Եվ-

դոկիայում, Շոռոթում ու Կաֆայում ԺԲ—ԺԹ դարերում: Ձեռագրերն ունեն արժեքավոր հիշատակարաններ և հիշատակագրություններ:

Գրքույկում նկարագրված բազմաթիվ նըպատակային հանդիպումները հայ և օտար գիտնական-արվեստաբանների, հոգևորական և աշխարհական շատ ու շատ անձանց հետ օգնում են հեղինակին՝ Բաբկեն Չուգասպյանին՝ ի հայտ բերելու հայ հոգևոր արժեքների բազմաթիվ նմուշներ, նրանց գրիչների ու ծաղկողների կենսագրություններ:

Բազմաթիվ են գրքույկում հիշատակված ձեռագրերը և դրանց հետ կապված զանազան մանրամասներ. Հովհաննես Սեբաստացու «Պատմություն Սեբաստիոյ», «Մշո ճառընտիր», «Թուխ Մանուկ Ավետարան», Ամիրդովլաթ Ամասիացու «Օգուտ բժշկության» և «Անգիտաց անպետից» անթվական ընդօրինակությունները և շատ ու շատ հնատիպ գրքեր, Ավետարաններ և այլ բազմաթիվ հոգևոր արժեքներ:

Կավճապատ թղթի վրա վետեղված ներդիր ութ գունավոր նկարները, որոնք նմուշներ են հիշատակված ձեռագրերից, առավել ցայտուն են դարձնում պատումները:

Բաբկեն Չուգասպյանի ջնորհակալ աշխատանքի պտուղները շոշափելի են:

ՎԼԱԴԻՍԼԱՎ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԱՅՍ ԽԱՉՔԱՐԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆ Է՝ Ի ՀԱՎԵՐԺԱՅՈՒՄՆ ՄԵԾ ՄԱՐԴԱՍԵՐ ԴՈԿՏ. ԻՈՀԱՆՆԵՍ ԼԵՓՍԻՈՒՍԻ ՀԻՇԱՏԱԿԻ